

ՄԱՐԶԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

**I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

1. Տարածաշրջանային քաղաքականության և այն իրողություն դարձնելու ծրագրերի արդյունավետության ապահովումը պահանջում է երկրի տարածքային միավորների բնութագրերի և առանձնահատկությունների վերաբերյալ հստակ պատկերացում, առկա հիմնախնդիրների և դրանց լուծման անհրաժեշտության գնահատականներ, լավագույն տարբերակներ գտնելու մոտեցումներ: Այս համատեքստում յուրաքանչյուր մարզ պետք է բազմակողմանի հետազոտվի և բնութագրվի, որպեսզի գնահատվեն նրա հնարավորությունն ու ակնկալիք մասնակցությունը երկրի ընդհանուր զարգացման գործում, և անհրաժեշտության դեպքում նաև աջակցություն ցուցաբերվի նրան:

2. Տարածաշրջանային քաղաքականության շրջանակներում ծրագրերի իրականացման գործընթացներում այդ պահանջները կարելի է բավարարել միայն տարածքային միավորների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության և բազմաչափ ու բազմակողմ գնահատման համակարգ ունենալու պայմաններում:

3. Տնտեսության զարգացման ներկա փուլում տարածաշրջանային քաղաքականության կարևորագույն խնդիր է համարվում ՀՀ մարզերի և համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների մեղմացումը, որի լուծման հիմնական ուղղությունների մեկը տարածքային միավորների /մարզերի և համայնքների/ տնտեսական զարգացման ներուժի (ռեսուրսների) արդյունավետ օգտագործումն է:

**II. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐՈՒԺ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ**

4. Հայաստանի Հանրապետության տարածքային միավորների տնտեսական զարգացման ներուժը, դա տվյալ տարածքային միավորի առկա բնական և աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման պարագայում արդյունք

(ավելացված արժեք) ստեղծելու հնարավորությունն է:

5. Տնտեսական զարգացման ներուժի նման ընկալման պարագայում այն պայմանավորված է երկու գործոններով՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ գործոնը դա բնական, նյութական, աշխատանքային ռեսուրսների ամբողջությունն է, որոնք ներգրավված են կամ ինչ-որ պատճառներից ելնելով ներգրավված չեն արտադրության մեջ, սակայն իրական հնարավորություն ունեն ներգրավված լինելու: Սուբյեկտիվ գործոնը դա տվյալ տարածքային միավորում անհատների կամ կոլեկտիվի կարողություններն են այդ ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու: Տվյալ մեթոդաբանությունում գնահատվում է միայն օբյեկտիվ գործոնի բաղադրիչը՝ ռեսուրսային ներուժը (ռեսուրսաապահովվածությունը), որը հնարավորություն կտա ստանալ մարզերի ռեսուրսաապահովվածության վարկանիշային գնահատականներ և մարզերում ստեղծված արդյունքի հիման վրա գնահատել մարզերի տնտեսական գործունեության համեմատական արդյունավետությունը: Նման մոտեցման պայմաններում տարածաշրջանային քաղաքականության խնդիրն է դառնում օբյեկտիվ գործոնի գնահատականներից ելնելով պայմաններ ստեղծել սուբյեկտիվ գործոնի զարգացման համար:

### **III. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ**

6. Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն երկրներում, որտեղ տարածքային կտրվածքով հաշվարկվում են մակրոտնտեսական ցուցանիշներ, տնտեսական ներուժը գնահատվում է արտադրական ֆունկցիաների միջոցով ( $y = f(x_1, x_2, \dots, x_n)$ , որտեղ  $x_i$ -ն  $i$  տիպի ռեսուրսի քանակն է տվյալ տարածքային միավորում):

7. Մեծ տարածում ունի սցենարների մեթոդը, որը ՀՀ ՏԿԱԻՆ կողմից օգտագործվել է մարզային ծրագրերի ձևավորման գործընթացում, սակայն այս մոտեցումը թույլ չի տալիս կատարել տարածքային միավորների զարգացման հնարավորությունների համեմատություններ:

**IV. ՄԱՐԶԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

8. Սույն մեթոդաբանության հիմնական նպատակն է բացահայտել այն տարածքային միավորները, որոնց ռեսուրսային հնարավորություններն ավելի բարձր են, քան նրանց տնտեսական զարգացման մակարդակը, երկրում իրականացվող ծրագրերը դարձնել հասցեական և դրանք իրականացնել այն մարզերում, որոնց տնտեսական զարգացման ներուժի վարկանիշն ավելի բարձր է, քան տնտեսական զարգացման մակարդակը:

**V. ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

9. Մարզերի տնտեսական զարգացման ներուժի ամփոփ գնահատման ցուցանիշում ներառվելու են այն մասնակի ցուցանիշները, որոնք տնտեսական զարգացման գործոն են, և մարզերն ըստ այդ մասնակի ցուցանիշների ունեն շեղումներ:

10. Ամփոփ ցուցանիշ ներառվող մասնակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է, որը կապահովի դրա գործնական կիրառությունը:

11. Հաշվի առնելով, որ ամփոփ ցուցանիշի կազմ ներառվող մասնակի ցուցանիշներն ունեն տարբեր չափողականություն, դրանք համադրելի դարձնելու նպատակով կկիրառվի համաթվերի ձևավորման մոտեցումը:

**VI. ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ՀԱՄԱԹՎԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

12. ՀՀ մարզերի զարգացման ներուժի գնահատման նպատակով կատարված վերլուծությունների արդյունքում որպես զարգացման ներուժը բնութագրող ցուցանիշներ առանձնացվել են.

1) մարզերի հանքահումքային ( $R_{1j-t}^1$ ), ջրային ( $R_{1j-t}^2$ ), էներգետիկ ( $R_{1j-t}^3$ ) ռեսուրսներով ապահովվածության գործակիցները մարզում, որոնց վերաբերյալ

տեղեկատվություն կարելի է ստանալ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ից՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 3-ի «Բանավոր և գրավոր տեղեկությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 291-Ա հրամանի համաձայն):

Մարզի տնտեսական ներուժը ներկայացնող մյուս ցուցանիշների հետ համադրելի դարձնելու նպատակով դրանք նորմավորվում են հետևյալ բանաձևերով<sup>1</sup>.

$$I_{j-t}^1 = \frac{R_{1j-t}^1 - R_{1-t}^{1-\min}}{R_{1-t}^{1-\max} - R_{1-t}^{1-\min}}, j=1, \dots, 10$$

որտեղ՝  $I_{j-t}^1$ -ն մարզի հանքահումքային ռեսուրսներով ապահովվածության համաթիվն է t տարում,

$R_{1j-t}^{1-\max}, R_{1j-t}^{1-\min}$  -ն ըստ մարզերի հանքահումքային ռեսուրսներով ապահովվածության գործակիցների առավելագույն և նվազագույն արժեքներն են,

$$I_{j-t}^2 = \frac{R_{1j-t}^2 - R_{1-t}^{2-\min}}{R_{1-t}^{2-\max} - R_{1-t}^{2-\min}}, j=1, \dots, 10$$

որտեղ՝  $I_{j-t}^2$ -ն մարզի ջրային ռեսուրսներով ապահովվածության համաթիվն է t տարում,

$R_{1j-t}^{2-\max}, R_{1j-t}^{2-\min}$  -ն ըստ մարզերի ջրային ռեսուրսներով ապահովվածության գործակիցների առավելագույն և նվազագույն արժեքներն են,

$$I_{j-t}^3 = \frac{R_{1j-t}^3 - R_{1-t}^{3-\min}}{R_{1-t}^{3-\max} - R_{1-t}^{3-\min}}, j=1, \dots, 10$$

որտեղ՝  $I_{j-t}^3$ -ն մարզի էներգետիկ ռեսուրսներով ապահովվածության համաթիվն է t տարում,

$R_{1j-t}^{3-\max}, R_{1j-t}^{3-\min}$  -ն ըստ մարզերի էներգետիկ ռեսուրսներով ապահովվածության գործակիցների առավելագույն և նվազագույն արժեքներն են:

2) մարզերի աշխատանքային ռեսուրսների տեսակարար կշիռը Հայաստանի Հանրապետության գումարային աշխատանքային ռեսուրսների թվաքանակում (առանց

<sup>1</sup> Օգտագործվել է Մարդկային զարգացման համաթվի ձևավորման մոտեցումը:

Երևան քաղաքի)  $(R_{4-t})^2$ ,

Երկրորդ բաղադրիչի՝ **աշխատանքային ռեսուրսներով ապահովվածության գործակիցը**, ստանում ենք հետևյալ մոտեցումով՝ հաշվում ենք մարզի աշխատանքային ռեսուրսների տեսակարար կշիռը հանրապետության աշխատանքային ռեսուրսների նկատմամբ հետևյալ բանաձևով.

$$R_{4j-t} = \frac{X'_{j-t}}{X'_t}$$

որտեղ  $X'_{j-t}$ -ն աշխատանքային ռեսուրսների թվաքանակն է  $j$  մարզում  $t$  տարում ( $j=1, \dots, 10$ ),

$X'_t$ -ը՝ հանրապետության աշխատանքային ռեսուրսներն են (առանց Երևան քաղաքի):

Աշխատանքային ռեսուրսներով ապահովվածության համաթիվը հաշվարկում ենք հետևյալ բանաձևով.

$$I_{j-t}^4 = \frac{R_{4j-t} - R_{4-t}^{\min}}{R_{4-t}^{\max} - R_{4-t}^{\min}}, j=1, \dots, 10$$

որտեղ  $R_{4-t}^{\max}$  և  $R_{4-t}^{\min}$ -ը ըստ մարզերի աշխատանքային ռեսուրսներով ապահովվածության գործակիցների առավելագույն և նվազագույն արժեքներն են:

3) մարզերի գյուղատնտեսական նշանակության հողերի տեսակարար կշիռը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերում ( $R_{5-t}$ ):

**Գյուղատնտեսական նշանակության հողերով ապահովվածության գործակիցը** յուրաքանչյուր մարզի համար ստանում ենք որպես առանձին տեսակների գյուղատնտեսական նշանակության հողերի տեսակարար կշիռների կշռված միջին:

Գյուղատնտեսական նշանակության հողերով մարզի ապահովվածության գործակիցը՝  $R_{ij-t}^5$ -ը, հաշվարկվում է որպես կշռված միջին առանձին տեսակի հողատեսքերից, որպես կշիռներ ընտրելով մարզի համապատասխան հողատեսքի կադաստրային գնահատականները, որոնք կարելի է ստանալ մարզում ներառված համայնքների համապատասխան

---

<sup>2</sup> Տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ և ՀՀ ՏԿԱԻՆ տրամադրության տակ եղած “Համայնքների տեղեկատվական բազա”-ն:

կադաստրային գնահատականների միջոցով<sup>3</sup>.

$$R_{j-t}^5 = \frac{\sum_{i=1}^n (K_{ij-t} R_{ij-t})}{\sum_{i=1}^n K_{ij-t}}$$

որտեղ՝  $K_{ij-t}$  -ն  $j$  մարզում  $i$  հողատեսքի կադաստրային միջին գնահատականն է:

Հողային ռեսուրսներով մարզերի ապահովվածության համաթիվը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$I_{j-t}^5 = \frac{R_{j-t}^5 - R_{t-\min}^5}{R_{t-\max}^5 - R_{t-\min}^5}, j=1, \dots, 10$$

որտեղ  $R_{t-\max}^5$  և  $R_{t-\min}^5$  -ն ըստ մարզերի գյուղատնտեսական նշանակության հողերով ապահովվածության գործակցի առավելագույն և նվազագույն արժեքներն են:

4) մարզերի արտադրական ենթակառուցվածքների վիճակը և զարգացման մակարդակը ( $R_{6-i}$ ):

Տնտեսական զարգացման ներուժի կարևոր բաղադրիչներ են արտադրական ենթակառուցվածքները և զբոսաշրջության զարգացմանը նպաստող պատմամշակութային օբյեկտների առկայությունը մարզերում: “Համայնքների տեղեկատվական բազա”-ի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ըստ պատմամշակութային օբյեկտների առկայության ՀՀ մարզերն էապես չեն տարբերվում, ինչպես նաև այդ օբյեկտներին հասնելու ճանապարհային ենթակառուցվածքի վիճակի գնահատականներում մեծ շեղումներ չկան (դիտարկվել են համայնք-մայրուղի ճանապարհների վիճակը) և դրանք էական ազդեցություն չեն կարող թողնել տնտեսական ներուժի համաթվի վրա (շեղումները գնահատվել են միջին քառակուսային շեղման մեթոդով և  $[0;1]$  միջակայքում են):

“Համայնքների տեղեկատվական բազա”-ի տվյալները ցույց են տալիս, որ հողերի չմշակման հիմնական պատճառների շարքում առավել կարևորվում է ոռոգման ջրի հասանելիության և մատչելիության հիմնախնդիրը:

Մարզերի տնտեսական ներուժի ամփոփ գնահատման համաթիվ ներառվել է

<sup>3</sup> Տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ և ՀՀ ՏԿԱԻՆ տրամադրության տակ եղած “Համայնքների տեղեկատվական բազա”-ն:

ռոռգման ջրով ապահովվածության համաթիվը՝ հետևյալ մոտեցումով.

$X_{j-t}^6$  - ռոռգելի հողատարածքների մակերեսն է  $j$  մարզում,

$X_{j0-t}^6$  - փաստացի ռոռգվող հողատարածքների մակերեսն է  $j$  մարզում,

$R_{j-t}^6$  - փաստացի ռոռգվող հողատարածքների տեսակարար կշիռն է ընդհանուր ռոռգելի հողատարածքների նկատմամբ.

$$R_{j-t}^6 = \frac{X_{j0-t}^6}{X_{j-t}^6}, j=1, \dots, 10,$$

$$I_{j-t}^6 = \frac{R_{6-t}^{\max} - R_{j-t}^6}{R_{6-t}^{\max} - R_{6-t}^{\min}}$$

որտեղ՝  $R_{6-t}^{\min}$  և  $R_{6-t}^{\max}$  -ը ըստ մարզերի փաստացի ռոռգվող հողատարածքների տեսակարար կշիռների առավելագույն և նվազագույն արժեքներն են,

$I_{j-t}^6$ -ն՝ ռոռգման ջրով ապահովվածության համաթիվը:

13. Մարզերի տնտեսական ներուժի գնահատման ամփոփ համաթվի բանաձևը կունենա հետևյալ տեսքը.

$$I_{j-t} = \alpha_{1-t} I_{j-t}^1 + \alpha_{2-t} I_{j-t}^2 + \alpha_{3-t} I_{j-t}^3 + \alpha_{4-t} I_{j-t}^4 + \alpha_{5-t} I_{j-t}^5 + \alpha_{6-t} I_{j-t}^6,$$

որտեղ  $\alpha_{i-t}$ -երը համապատասխան ռեսուրսի համեմատական կարևորության նորմավորված գնահատականներն են (որոնք հաշվարկվում են փորձագիտական եղանակով),

$$\sum_{i=1}^6 \alpha_{i-t} = 1 :$$

14. Փաստաթղթում առաջադրված մեթոդաբանությունը թույլ է տալիս ստանալ մարզերի տնտեսական զարգացման հնարավորությունների վարկանիշային գնահատականներ, դրանք համեմատել տնտեսական զարգացման մակարդակի հետ և ներդրումային ծրագրերն իրականացնել այն մարզերում, որոնց տնտեսական զարգացման ներուժը հնարավորություն է տալիս ապահովել տնտեսական զարգացման ավելի բարձր մակարդակ: